

Համլետ Մ. Գևորգյան,
Պատմ. գիտ. դոկտոր
Արթուր Ս. Ղազարյան,
Քաղաքակ. գիտ. թեկնածու

ՍՈՒՐՄԱԿՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Զորավար Դրաստամատ Կանայանի մահվան 60-ամյա տարելիցի առիթով*

Բանալի բառեր – Դրաստամատ Կանայան, Սուրմալուի ձակատամարտ, Հայաստանի Հանրապետություն, Կարսի ձակատ, Արարատյան դաշտավայր, Կարո Սասունի, քուրդ, Կողբ, Քեազիմ Կարաբեքիր փաշա, Կարակալա, Երևան, Վահե Արծրունի, Ա. Ահարոնյան, Իգդիր, Կոռո Թարխանյան, Մարտիրոս Աբրահամյան:

Դրաստամատ Կանայանի գլխավորած բազմաթիվ կռիվներից վերջինը՝ Սուրմալուի ձակատամարտը, 1920 թ. հայ-թուրքական պատերազմում հայկական զորքի արձանագրած միակ ծանրակշիռ հաղթանակն էր, որը թեև Հայաստանի համար ունեցավ փրկարար նշանակություն, բայց հայ պատմագիտության, առավել ևս՝ հայ հանրության կողմից դեռևս չի ստացել իր արժանի գնահատականը:

Սուրմալուի հաղթական ձակատամարտը տեղի է ունեցել պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ Հայաստանի Հանրապետությունը, Սիմոն Վրացյանի պատկերավոր արտահայտությամբ՝ հայտնվելով «բոլշևիկյան մուրձի և թուրքական սալի» միջև, բռնագավթվեց և «եղբայրաբար բաժանվեց» Խորհրդային Ռուսաստանի, Թուրքիայի ու Ադրբեջանի միջև:

Թուրք-հայկական պատերազմում Սուրմալուի ռազմաձակատն ուներ իր առանձնահատկությունը. չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունն ու հայկական բանակի գլխավոր հրամանատարությունը Կարսի ձակատն էին ընդունում որպես գլխավոր ուղղություն, այնուամենայնիվ, Սուրմալուն իր աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ պակաս կարևորություն չէր ներկայացնում:

Նախ՝ Սուրմալուի ռազմաձակատը ավելի մոտ էր գտնվում հանրապետության մայրաքաղաք Երևանին, և եթե թուրքական զորքերին հաջողվեր խորտակել այստեղ մարտնչող զորամասերի դիմադրությունը, ապա նրանք կարող էին հաջողությամբ զետեսցել Արաքսը և հաշված ժամերի ընթացքում հայտնվել Երևանի մատույցներում: Ուստի մարտական գործողությունների այդօրինակ զարգացումն անխուսափելիորեն հարցականի տակ կդնէր ոչ միայն ՀՀ մայրաքաղաքի, այլև ողջ Հայաստանի գոյությունը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2016:

Ը (ԺԳ) փաթիլ, թիվ 1 (53) հունվար-մարտ, 2016
ՎԿՄ համահայկական հանդես

նր: Ահա այդ կործանարար սպառնալիքը նկատի ունեւ գեներալ Սիլիկյանը՝ շեշտելով. «...եթե Երևանը անցնի թշնամու ձեռքը, ինչ արժէք կունենայ Կարսի ձակատը»:

Երկրորդ՝ ի տարբերություն Սարիղամիշ-Կարս ուղղության, որը, շնորհիվ հարյուրավոր հրամանախմբերով ու գնդացիներով զինված Կարսի բերդաքաղաքի, ինչպես նաև այդ ուղղությունում գործող գրահագնացքի, ունեւ պաշտպանության հզոր միջոցներ և անգամ մարտական բավարար ուժեր, Սուրմալուի ռազմաձակատը զուրկ էր դրանցից:

Սակայն Դրոն իր հարուստ մարտական փորձով խորապես տիրապետում էր պատերազմների պատմության մեջ բազմիցս հաստատված այն ճշմարտությանը, որ որևէ ձակատամարտում հաղթելու նախադրյալները պայմանավորված են ոչ այնքան տեղանքի ու զինվածության գործոններով, այլ նախ և առաջ մարտունակ, կարգապահ ու բանիմաց հրամանատարների և զինվորների անբասիր վարքով ու նվիրվածությամբ: Սուրմալուի ռազմաձակատի հրամանատարությունը ստանձնելիս նա գլխավորապես առաջնորդվել էր հենց այդ հանգամանքով, և ինչպես վկայում է Կարո Սասունին՝ «... **կարողացած էր իր մօտ հաւաքել լաւագոյն հայ սպաներ, որոնց կազմած զօրամասերը հայկական բանակի ընտրանին էին: Զօրքերը և ժողովուրդը շատ կը սիրէին Դրօն, որուն շուրջը համալսմբուած էին** (ընդգծումը մերն է- Լ. Գ. և Ա. Դ.)»²:

Եվ **երրորդ՝** չթերագնահատելով Սարիղամիշ-Կարս ուղղության կարևորությունը՝ Դրոն մեծապես կարևորել է Սուրմալուի ռազմաձակատի նշանակությունը նաև այն պատճառով, որ այստեղ, բացի թուրքական կանոնավոր զորամասերից, գործում էին նաև ավելի քան 6000 զինյալներից բաղկացած քրդական անկանոն խմբեր, որոնք քանակական առումով ավելին էին, քան Սարիղամիշ-Կարսի ուղղությունում հարձակվող քուրդ զինյալները: Սուրմալուի ձակատում կենտրոնացած քրդական հրոսակախմբերն, անկասկած, տեղյակ էին, որ իրենց շրջանների քրդերի մի մասին կոտորել էր հենց Դրոյի գլխավորած պատժիչ արշավախումբը՝ 1915 թ. ձեռնարկված նշանավոր «Աբաղայի արշավանք»-ի ժամանակ³: Ուստի նրանց շարքերը պարբերաբար համալրվում էին Բագրևանդի, Աբաղայի, Դիադինի և հարակից այլ շրջանների քրդերով⁴: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի ահավոր սպանդ ու ավարատություն կիրականացնէին այդ հրոսակախմբերը Արարատյան դաշտում և ՀՀ մայրաքաղաքում, եթե նրանց հաջողվեր հաղթահարել հայկական զորքերի դիմադրությունն ու գետնանցելով Արաքսը՝ խորանալ հանրապետության տարածքում:

Դրոն մարտադաշտում և այլ պայմաններում բազմիցս առնչվել էր թուրք և քուրդ հրոսակներին ու գերագանց գիտեր հայության նկատմամբ նրանց տրամադրվածությունը: Ուստի խորապես գիտակցելով Սուրմալուի ուղղության կարևորությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում՝ նա հայկական բանակի հրամանատարությունից պահանջում է իրեն վստահել հարագատ Սուրմալուի, այլ ոչ թե Կարսի ռազմաձակատի հրամանատարությունը:

Միմոն Վրացյանի վկայաբերած տվյալներով՝ Սուրմալուի ռազմաձակատում կենտրոնացած ավելի քան 10.000 զինյալներից բաղկացած թուրքական կանոնավոր զորամասերին ու նրան աջակցող քրդական հեծելախմբերին, որոնք կռիվների ընթացքում պարբերաբար համալրումներ էին ստանում, դիմակայում էին ընդամենը «...9-րդ գունդը՝ 1200 հետևակ, 25 ձիաուր, 16 գնդացի, հրամանատար գնդապետ Խուդաբաշեան, 8-րդ գունդը՝ 600 հետևակ, 40 ձիաուր, 8 գնդացի, հրամանատար գնդապետ Տ. Բաղդասարեան, էքսպեդիցիոն զօրամասը՝ 5 վաշտ՝ 500 հետևակ, 16 բեռնակիր և 8 գնդացի, Կոռո Թարխանեանի այրուձին՝ 260 ձիաուր, 6 գնդացի: Հոկտեմբերի 1-ին 8-րդ գունդը փոխադրուեց Կարսի ձակատ, դրա փոխարէն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զօրամասի թիւը հասաւ 2000 հոգի» և

1 Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Պէյրոյթ, 1960, հատ. Բ, էջ 243:

2 Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, N 6, ապրիլ, էջ 96:

3 Աբաղայի արշավանքի մասին տես Գևորգյան Հ., Դրո, եր., 2007, էջ 131-157:

4 Տես ՀՅԴ Կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար 121, գործ 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21), էջ 5:

1000 կամավոր աշխարհագրայիններ ⁵:

Նույն տվյալներն ենք գտնում նաև հայ-թուրքական պատերազմի Կարսի ու Սուրմալուի ռազմաձևակառուցում տեղի ունեցած մարտական գործողություններին մոտիկից առնչված Վահե Արծրունու մոտ: Ըստ նրա՝ Սուրմալուի ձևակառուցում գործում էին հետևյալ զորամասերը. «...9-րդ, 10-րդ և 11-րդ գունդերը, Երևանի պահեստի ուտիկանությունը, սասունցի ձիաուորները, Սուրմալուի և Վասպուրականի կամաուորները, ինչպես նաև եզիտներու 200 կամաուորները՝ Ջեանգիր աղայի ղեկավարությամբ, ընդամենը՝ մոտ 3000 շունչ...»⁶:

Սուրմալուի ձևակառուցում գրեթե քառակի անգամ գերակշռող ուժեր ունեցող (եթե ներառենք նաև քրդական զինյալ հրոսակախմբերը), հակառակորդի դեմ մարտնչող հայ զինվորների քանակը երկու վկայություններում էլ նույնն է: Բայց 3000 մարտունակ և իրենց հայրենիքին նվիրված քաջակորով մարտիկներն ու նրանց անպարտելի հրամանատարն ավելի քան բավական էին թշնամուն ջախջախելու համար:

Մինչև 1920 թ. հոկտեմբեր ամսին տեղի ունեցած վճռական մարտերը Դրոյին հարկ է լինում հաղթահարելու կարևոր նշանակություն ունեցող մի քանի արգելքներ, որոնք անհրաժեշտ էին հետագայում հակառակորդի դեմ արդյունավետ գործողություններ վարելու համար:

Հիմնական մարտական գործողությունների նախօրեին թուրքական հրամանատարությունը ապագա արշավանքի հաջողության գրավականն էր համարում Հայաստանի մի շարք սահմանամերձ շրջանների, այդ թվում Սուրմալուի թրքաբնակ և քրդաբնակ բնակավայրերի ու հատկապես Կողբի աղահանքերի գրավումը՝ դրանք հետագա առաջխաղացման հենակետերի վերածելու համար: Եթե հայկական բանակի հրամանատարությունը ժամանակին չձեռնարկեր համապատասխան քայլեր, ապա Կողբի տարածքը, ինչպես նաև հակառակորդի մյուս թիրախները ապագա արշավանքի նախօրեին կարող էին դառնալ հարմար հենակետեր՝ ամենակարճ ճանապարհով Երևանի վրա հարձակում գործելու համար: Որպեսզի Սուրմալուի գավառում և հարակից շրջաններում պահպանվեր կայուն ու անվտանգ իրավիճակը, անհրաժեշտ էր նախ և առաջ վերացնել նման հենակետերը և թույլ չտալ, որպեսզի հակառակորդն ամրապնդվեր դրանց տարածքներում:

Ուստի Սուրմալուի ձևակառուցման սկզբնական փուլում ստեղծված կացության թելադրանքով հայկական ուժերը ստիպված էին գործել հարձակողական բնույթի մարտավարությամբ, առաջին հերթին՝ Կողբի տեղամասում: Դեռևս մինչև թուրք-հայկական պատերազմի սկիզբը ՀՀ զինված ուժերի հրամանատարությունից ստանալով համապատասխան առաջադրանք՝ Դրոն վճռում է նախահարձակ լինել և ջախջախել Կողբի աղահանքերում կենտրոնացած թուրքական զորքերին ու նրանց սատարող քրդական զինախմբերին: Սեպտեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Սուրմալուի ձևակառուցում տեղաբաշխված մարտական ուժերը Դրոյի հրամանատարությամբ, առանց որևէ առանձնահատուկ նախապատրաստության հարձակվում են Կողբի աղահանքերում դիրքավորված հակառակորդի վրա: Հայկական զորամասերն անկասելի հարվածներով ջախջախում են նոր միայն այստեղ թափանցած թուրքական զորքերին ու քրդական զինախմբերին և դուրս շարտում Հայաստանի սահմաններից⁷:

Կողբի աղահանքերի գրավումը Դրոյի հրամանատարությամբ իրականացված առաջին հարձակողական գործողությունն էր Սուրմալուի ռազմաձևակառուցում, որն ավարտվեց հայկական զորքերի փայլուն հաղթանակով: Ընդամին, նա, խելամտորեն հաշվի առնելով կամավոր-աշխարհագրայինների ոչ այնքան մարտունակ վիճակը, հակառակորդի դիրքերի վրա գրոհները ձեռնարկեց միայն կանոնավոր զորամասերի ուժերով, որոնք չէին մասնակցել թաթարական բնակավայրերի վրա 1920 թ. ամռանը ձեռնարկված հարձակումներին և չտրվելով թալանին ու ավարառությանը՝ պահպանել

5 Տես Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 478:

6 Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայությունը: Շատախ, Եր., 2002, էջ 198:

7 Տես Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, N 6, ապրիլ, էջ 94:

էին մարտունակությունն ու կարգապահությունը⁸:

Այս հաղթական գործողությունից հետո Սուրմալուի ուղղությունում ժամանակավորապես կայուն իրավիճակ է հաստատվում, ինչը ՀՀ զինված ուժերի հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում, ի հաշիվ Սուրմալուի ռազմաճակատի թուլացման, գնդապետ Տ. Բաղդասարյանի 8-րդ գունդը փոխադրել Կարսի ուղղություն: Իհարկե, մի ամբողջ գնդի տեղափոխությունը շոշափելի կորուստ էր, մանավանդ այն պահին, երբ հիմնական և առավել ծանր մարտական գործողությունները նոր էին ծավալվելու: 8-րդ գունդը Կարսի ուղղություն տեղափոխելուց հետո, ինչպես և սպասվում էր, Սուրմալուի ռազմաճակատում ստեղծվում է բավականին անախորժ իրավիճակ: Դրոն առաջացած ձեղքվածքը փակելու նպատակով հարկադրված էր Տ. Բաղդասարյանի 8-րդ գնդի տարածքի պաշտպանությունը հանձնարարել գնդապետ Խուդաբաշյանի գնդին, որն այդ ժամանակ զբաղեցնում էր Կողբի պաշտպանական բնագիծը:

Ակնհայտ է, որ սեպտեմբերի 23-ին Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած թուրքական բանակի ներխուժման պայմաններում ռազմաճակատում կենտրոնացած խիստ սահմանափակ ուժերով չափազանց դժվար էր հուսալիորեն պաշտպանել նոր դիրքերը: «Երևանից մեկնելուց առաջ,- գրում է Ս. Վրացյանը,- ես տեսնուեցի Դրոյի հետ: Նա մնայլ գոյներով նկարագրեց կացությունը և ցաւ հայտնեց, որ ես հեռանում եմ մայրաքաղաքից: Նա լաւատեղեակ էր Կարսի զօրամասերի հոգեբանական վիճակին, մանաւանդ հրամանատարական կազմի թուլութեան: Վրոշվում էր, որ զինուորական նախարարութիւնը հրամայել էր Սուրմալուի ճակատի լաւագոյն զօրաբաժինների մի մասը (խոսքը գնդապետ Տ. Բաղդասարյանի 8-րդ գնդին է վերաբերում - Հ.Գ. և Ա.Ղ.) փոխադրել Կարսի շրջան: Նա չէր ժխտում Կարսի ճակատը ուժեղացնելու անհրաժեշտութիւնը, բայց ոչ Սուրմալուի տկարացման գնով: Սուրմալուն կորցնել, նրա կարծիքով, նշանակում է Հայաստանը կորցնել»⁹:

Հարկավոր էր համակերպվել ստեղծված իրողության հետ ու ապավինելով եղած ուժերին՝ պաշտպանել ռազմաճակատը և թույլ չտալ թուրքական զորքերին գրավելու Սուրմալուն ու գետնանցելու Արաքսը: Քանզի չնայած այն հանգամանքին, որ Սուրմալուի ուղղությամբ գործում էին թուրքական մեծաքանակ զորքեր ու քրդական հեծելախմբեր, հակառակորդի հրամանատարությունը, նպատակադրվելով արագացնել այդ տեղամասում մարտնչող հայկական զորամասերի ջախջախումը, հոկտեմբերի սկզբներին Իգդիրի հատվածում մարտադաշտ էր նետել նաև Բայազետի զորախումբը և իր առաջապահ ջոկատներով գրավել էր Արիաջ գյուղը: Միաժամանակ, օգտվելով 8-րդ գնդի հեռանալու պատճառով ռազմաճակատի չափից ավելի ձգվածությունից, թուրքական զորքերը հոկտեմբերի 3-ի լույս 4-ի գիշերը վերսկսել էին հարձակումը և չհանդիպելով լուրջ դիմադրության՝ գրավել Կողբը և զարգացնելով հարձակումը՝ փորձում էին մոտենալ անգամ Արաքսի Կարակալա կամրջին: Ռազմաճակատի այդ հատվածում դիրքավորված գնդապետ Խուդաբաշյանի գունդը ստիպված էր պաշտպանել Դալիկ-Դաշից մինչև Արիաջ ընկած գիծը¹⁰: Եթե այդ տարածքում դիրքավորված մարտիկները չկարողանային անառիկ պահել իրենց վստահված պաշտպանական բնագծերը, ապա թուրքական ուժերը կարող էին թևանցել նրանց, թիկունքից ամբողջովին մեկուսացնել ռազմաճակատի Կողբի հատվածը և զարգացնելով հարձակումը՝ առաջանալ դեպի Կարակալայի կամուրջը: Իսկ եթե այստեղ նույնպես նրանց հաջողվեր հաղթահարել հայ մարտիկների դիմադրությունը, ապա Կարակալայի կամուրջը գրավելուց հետո կարող էին հայտնվել Արարատյան դաշտում¹¹:

Ճակատամարտը ղեկավարող գնդապետ Խուդաբաշյանը, սթափ գնահատելով մարտադաշտում ստեղծված իրավիճակը, անձամբ մեկնում է դեպի Կարակալայի կամուրջը և թշնամու գրոհները դիմակայելու այլ ելք չտեսնելով՝ «... խնդրեց, որ Դրո ևս

8 Տե՛ս Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 198:

9 Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հատ. Բ, Պէյրութ, 1960, էջ 243:

10 Տե՛ս ՀՅԴ Կենտրոնական արխիվ, թղթծ. 121, գ. 97 («Հայաստանի վերջին անցքերը», էջ 21), էջ 7:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 7-8:

աճապարէր նոյն տեղը, խորը համոզուած, որ շուտով տեղի պիտի ունենային ճակատագրական պայքարներ, որոնք տուեալ պայմաններուն մէջ մեզ համար աննպաստ հետևանքներ պիտի ունենային, եթէ Դրօշի ներկայութիւնը զգալի չըլլար հոն»¹²: Դրոն անհասպաղ ուղևորվում է մարտադաշտի ամենավտանգված՝ Կարակալայի կամրջի տեղամասը: Մարտադաշտում նրա անմիջական ներկայությունն ու ձեռնարկած քայլերը ձիշտ ժամանակին էին: Գնդապետներ Խուդաբաշյանի և Բեկ-Ջուրաբյանի գլխավորած մարտիկների դիմադրությունն աներեր էր: Թուրքական զորքերի ձեռնարկած բոլոր փորձերը՝ խորտակելու հայ մարտիկների դիմադրությունն ու գետնացելու Արաքս գետը, անցնում են ապարդյուն:

Հուսալիորեն ապահովելով Կարակալայի կամրջի պաշտպանությունը՝ Դրոն ձեռնամուխ է լինում հայկական զորքերի հակահարձակումը կազմակերպելու գործին: Հարկ է ըստ արժանվույն գնահատել կռիվների ժամանակ նրա կիրառած միանգամայն կշռադատված և արդյունավետ մարտավարությունը, որը, կարելի է վստահաբար ասել, խիստ ուսանելի երևույթ է հայ ռազմարվեստի պատմության մէջ: Դրոն, որպէս կանոն, հակառակորդի ձեռնարկած հարձակումները խափանելու նպատակով չէր սահմանափակվում կրավորական ինքնապաշտպանությամբ: Դիմագրավելով հակառակորդի գրոհները՝ նրա հրամանով հայ մարտական ուժերը հարձակումներ էին գործում ճակատի մեկ այլ հատվածում կենտրոնացած թշնամու հենակետերի վրա: Դա հնարավորություն էր ընձեռում ոչ միայն ապակողմնորոշել թշնամուն, խառնել նրա հրամանատարության ծրագրերը, այլև մասնատել հակառակորդի մարտական ուժերը և խափանել զորամասերն արագորեն տեղաշարժելու, մեկ գլխավոր ուղղությամբ կենտրոնացնելու և հզոր հարվածներ հասցնելու հնարավորությունները:

Հոկտեմբերի 3-ին, 4-ին և 5-ին տեղի ունեցած կռիվներում Դրոն դարձյալ գործել է վերոհիշյալ մարտավարությամբ: Խափանելով Արաքսը գետնացելու թուրքական զորքերի բազմիցս կրկնվող փորձերը՝ Դրոյի հրամանով նույն օրը հայկական զորքերը սրբնթաց հակահարձակումով գրավում են նաև Արհաջ, Պիրլու և Խոզբալ բնակավայրերը, սակայն հակառակորդի՝ մարտադաշտ հասած նոր զորախմբերի դիմադրությունն ու գիշերային խավարը խոչընդոտում են զարգացնելու ձեռք բերած հաջողությունը:

Այդ օրվա մարտերի վերաբերյալ հայկական զորաբանակի շտաբը ստանում է հետևյալ հեռագիրը. «Հոկտեմբերի 4-ի կեսօրվան,- նշվում է ռազմաձևակառուց ուղարկված անփոփազրերից մեկում,- հակառակորդին հաջողվում է գրավել Պիրլու գյուղը և Կողբ բնակավայրը: Մեր զորամասերը հետ են քաշվել մինչև Կարակալայի կամուրջը: Մոտավորապես ժամը 15-ին Իգդիրի կողմից հասցված հակահարվածով մեզ հաջողվում է գրավել Պիրլու գյուղը, բայց Ղանշլու գյուղի մոտակայքում թուրքերի և քրդերի զգալի ուժերի (մոտ 1000 մարդ երկու գործող հրանոթներով) կուտակման և մուրթն ընկնելու հետևանքով մեր հարձակումը կանգ է առել:

Իգդիրի շրջանում հոկտեմբերի 4-ի երեկոյան Խալֆալու և Խոշխաբար գյուղերը գրաված քրդերի հետ ունեցել ենք փոխհրաձգություն: Հոկտեմբերի 5-ի առավոտյան մեր հետախույզները գրավել են նշված գյուղերը և Արհաջ գյուղը»¹³:

Սուրմալուի ռազմաձևակառուցում հոկտեմբերի 3-ին, 4-ին և 5-ին տեղի ունեցած կռիվները լուսաբանող մեկ այլ մեկնաբանության հեղինակը, նույնպես արձանագրելով հայկական զորքերի հաղթանակը, նշում է. «Թշնամին, տեսնելով հայ զորքերու ուժեր յարձակողականը, թոյլ դիմադրութիւն մը ցոյց տուաւ և քաշուեցաւ Մասիսի լանջերը: Այս կռիւներու ժամանակ օգնութիւն էր հասած գնդ. Ջհանգիր Բէգը (եգդի) իր 80 զինուորներով: Դրօշի կարգադրութեամբ հայ զօրքը իր նախկին դիրքերը կը վերադառնար ու հոն կ'ամրանար»¹⁴:

Ի տարբերություն Սուրմալուի ռազմաձևակառուցի՝ Կարսի ուղղությունում թուրքական

12 Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 201:

13 ՀՅԴ Կենտրոնական արխիվ, թղթժ. 17/17, գ. 3, էջ 3:

14 Սասունի Կ., Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», Պոսթըն, 1926, N 6, ապրիլ, էջ 95:

գորքերի ձեռք բերած նվաճումներն ակնառու էին: Ավելին, այստեղ հոկտեմբերի 14-ին հաջող սկսված, բայց ողբերգական ավարտ ունեցած հարձակման արդյունքում հայկական զորքերը մատնվել էին անսպասելի խուճապի և հուսալքության: Կարսի ռազմաճակատում հայկական զորքերի պարտությունը մեծապես պայմանավորեց ոչ միայն պատերազմի հետագա ընթացքը, այլ նաև Հայաստանի Հանրապետության ձակատագիրը: Հոկտեմբերի 14-ին Կարսի ռազմաճակատում հայկական զորքերի կրած անհաջողությունն իր բացասական ազդեցությունն է գործում նաև Սուրմալուում ընթացող գործողությունների վրա, սակայն Դրոյի առաջնորդած մարտիկների ոգին ու վճռականությունն անսասան էին:

Պատերազմում վերջնական հաղթանակ նվաճելու համար թուրք հրամանատարությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկեր՝ փորձելով բեկում մտցնել նաև Սուրմալուի ուղղությունում, ուր դեռևս միայն պարտություններ էր կրում: Սուրմալուի ձակատում մարտնչող հայկական զորքերի դիմադրությունը խորտակելու համար թուրք հրամանատարությունը համալրում և վերախմբավորում է ռազմաճակատի այդ հատվածում կենտրոնացած գորամասերը: Հոկտեմբերի կեսերին զգալի ռազմական ուժեր կենտրոնացնելով Դաշբուռունի և Դալիկ-Դաշի ուղղությամբ՝ թուրք հրամանատարությունը ծրագրում էր կենտրոնացված, խոյահարիչ հարվածներով ձեռք բերել հայկական գորամասերի պաշտպանությունը, գրավել Մարգարայի և Կարակալայի կամուրջները, դուրս գալ Երևան-Իգդիր խճուղին, ապա խորանալ Արարատյան դաշտավայրում և առաջանալ դեպի ՀՀ մայրաքաղաք Երևան:

Մարտական գործողությունները հաջողությամբ զարգացնելու դեպքում թուրք հրամանատարությունը նպատակ ուներ նաև կտրել Երևան-Ալեքսանդրապոլ հաղորդակցության ուղիները և աքցանի մեջ վերցնել Սարիղամիշ – Կարս ռազմաճակատն ու բերդաքաղաքը: Վերոհիշյալ հանգամանքների առկայության շնորհիվ Սուրմալուի ռազմաճակատը ձեռք էր բերում արտակարգ կարևորություն:

Հանրապետության ղեկավարությունն ու ժողովուրդը սրտատրոփ և մեծագույն հույսով ու հավատով ակնկալում էին Սուրմալուի ձակատում հայկական զորքերի նվաճած հաղթանակի ավետիսին: Այս անգամ ևս նրանք իրենց ակնկալիքների մեջ չէին սխալվում, քանզի այնտեղ իր քաջակորով մարտիկներով մարտնչում էր Դրոն: «Իր անձնական քաջութեամբ, – գրում է Ալ. Խատիսյանը, – Դրոն դարձած էր հայ զինուորի կուրքը և այդ պատճառով՝ ընդունակ էր հրաշքներ գործելու անոր հետ»¹⁵:

Այո, Դրոն և նրա առաջնորդած մարտիկները գործելու էին հերթական հրաշքը, թեև Գլխավոր ռազմակայանից, նույնիսկ այդ ձակատագրական, բախտորոշ պահին, Սուրմալուի ռազմաճակատի գորամասերի մարտաշարքերը համալրելու համար լրացուցիչ մարտական ուժեր չուղարկվեցին: Հանրապետության կառավարությունն ու հայկական բանակի հրամանատարությունը քաջատեղյակ էին, որ Սուրմալուի ձակատում մարտնչող հայկական զորքերը քանակական առումով զգալիորեն զիջում են հակառակորդին, սակայն ավելի քան վստահ էին, որ դեպի մայրաքաղաքի դարպասները ձգվող ուղիներն անառիկ են ու հուսալիորեն պաշտպանված:

Արարատյան դաշտի և մայրաքաղաքի բնակչությունը սիրահոժար օգնում և ոգևորում էր ռազմաճակատում կռվող իր զավակներին, որոնք արդեն նախորդ մարտերում դրսևորած հերոսությամբ իրավամբ վաստակել էին հայության սերն ու վստահությունը: Սուրմալուի ռազմաճակատի թիկունքը գործում էր անխափան: Այդ օրերին կարծես Մայիսյան հերոսամարտերի ոգին էր վերստին արթնացել ռազմաճակատին սատարող Արարատյան դաշտի հայության շրջանում:

Սուրմալուի ձակատում կենտրոնացած թուրքական զորքերն ու քրդական հրոսակալները անհրաժեշտ վերախմբավորում և նախապատրաստական քայլեր կատարելուց հետո հոկտեմբերի 24-ին վերսկսում են մարտական գործողությունները և մեծ ուժերով հարձակվում Մարգարայի ու Կարակալայի կամուրջների մերձակայքում

15 Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1925, N 9, յուլիս, էջ 106:

պաշտպանական դիրքեր գրաված հայկական զորավաշտերի վրա: Կարելի է ասել, որ այդ երկու կամուրջները Հայաստանի Հանրապետության յուրօրինակ դարպասներն էին: Ահա թե ինչու թուրք հրամանատարությունը հայկական ողջ բանակը օղակի մեջ վերցնելու և ջախջախելու նպատակով ձգտում էր նախ և առաջ գրավել Արաքսի կամուրջները և ուշադրության չարժանացնելով զոհերն ու կորուստները՝ ամենակատարի և հզոր հարվածներ էր տեղում հենց այդ հատվածները պաշտպանող զորամասերի վրա:

Սուրմալուի ռազմաձևակառուցի հրամանատարության համար չէր կարող գաղտնիք լինել թուրք հրամանատարության նման մարտավարությունը: Նախորդ կռիվների փորձն արդեն մատնանշում էր, որ այս անգամ ևս հակառակորդը առաջին հերթին գրոհներ կձեռնարկի հենց կամուրջների ուղղությամբ: Հայկական կողմը, շատ լավ գնահատելով այդ իրողությունը, իր հերթին համապատասխան քայլեր էր ձեռնարկել՝ սպասվող հարձակումներին դիմագրավելու համար¹⁶:

Դրոն, որպես կանոն, շատ լավ տիրապետում էր իր հրամանատարությամբ մարտնչող յուրաքանչյուր զորամասի և հրամանատարի մարտական որակներին ու կարողություններին, ինչը նրան հնարավորություն էր ընձեռում անհրաժեշտ պահին կատարել ուժերի ճիշտ տեղաբաշխում: Կռիվների ժամանակ նրա տարերքը շարժումն էր, մարտադաշտի ամենաշիկացած կետերում հայտնվելը, անձնական օրինակով մարտիկներին ոգևորելն ու սխրանքի կոչելը: Այս կռիվների ժամանակ Դրոն դարձյալ իր տարերքի մեջ էր: Կռիվների ողջ ընթացքում ռազմաձևակառուց գորամասերի կապն իրենց հրամանատարի հետ անխափան է գործել: Զորագնդերի հրամանատարներին Դրոյի կողմից տրված հրամանը միակն էր. գոհվել, բայց պաշտպանել Արաքսի գետանցումները և ոչ մի պարագայում թույլ չտալ թշնամուն անցնելու գետն ու խորանալու Արարատյան դաշտում¹⁷:

Այդ նույն օրը Դրոն դարձյալ գործեց իր նախասիրած, համակողմանիորեն կշռադատված, իսկ հակառակորդի համար անսպասելի մարտավարությամբ: Եթե ձակատի մի հատվածում նրա գլխավորած մարտական ուժերը անսահանջ դիմադրությամբ պաշտպանում էին Արաքսի գետանցումները, ապա մեկ այլ հատվածում նախահարձակ լինելով՝ գրոհներ էին ձեռնարկում թուրքական զորամասերի վրա: Հոկտեմբերի 24-ին տեղի ունեցած կռիվներում իրենց հարձակողական գործողություններով հատկապես աչքի ընկան գնդապետներ Խուդաբաշյանի և Մամաջանյանի գլխավորած զորագնդերը: Մասնավորապես՝ չդիմանալով գնդապետ Խուդաբաշյանի առաջնորդած զորագնդի հարձակմանը՝ թուրքերը թողնում են Քյուլիկի բնագծերը և շարժվելով դեպի Կարակալայի կամուրջը՝ ձգտում են միանալ այդ տեղամասում գտնվող իրենց զորքերին:

Ներկայացնելով ձակատամարտի այդ պահը՝ Վահե Արծրունին նշում է. «...Հոն ևս սխալուեցան: Մեր հրետանիին կրակը գետի երկու ափերէն և Քեալակարխի առաջաւոր դիրքերու բարձունքներէն ստիպեց տաճկական կատաղած ալիքները՝ իրենք իրենց վրայ գալարուելով, ետ երթալու: Գնդապետ Խուդաբաշեան, հանգիստ չտալով թշնամիին, վերջինիս ստիպեց լքել նաև Քիթիկ (Գետիկ) և նահանջել դեպի Գամիշլուի և Սէօգիթի բարձունքները: Աւելի դէպի ձախը՝ լամբապետ բաշգառնեցի Մարտիրոսի յաջող դիմադրութեամբ մը Խօշխաբարէն մինչև Եայջի երթալով, միացաւ գնդապետ Մամաջանեանի թևին»¹⁸:

Անհաջողության մատնվելով ռազմաձևակառուցի վերոհիշյալ հատվածներում՝ թուրք հրամանատարությունը, կենտրոնացնելով առավել մեծաքանակ մարտական ուժեր, գրոհը զարգացնում է Դաշբուրունի և Դալիկ-Դաշի ուղղությամբ: Թուրքական զորամասերը քրդական հեծելախմբերի գործուն օգնակցությամբ կարողանում են ուժգին հարձակումով գրավել Դաշբուրուն գյուղը, այնուհետև հաջողությունը զարգացնել Իգդիր-Մարգարա խճուղու ուղղությամբ: Հաղթահարելով այդ հատվածում մարտնչող

16 Տե՛ս «Յառաջ», եր., 1920, նոյեմբերի 17:

17 Տե՛ս ՀՅԴ Կենտրոնական արխիվ, թղթծ. 17/17, գ. 3, էջ 4:

18 Արծրունի Վ., նշվ. աշխ., էջ 203:

հայկական սակավաթիվ ուժերի դիմադրությունը՝ թուրքերը նույն օրը գրավում են նաև Ղաջար-Թոխանլու, Կարակոյունլու գյուղերը և հասնում մինչև Դալիկ-Դաշ, որը մարտավարական առումով կարևոր դիրք ուներ: Դալիկ-Դաշի գրավումը հակառակորդին հնարավորություն կրնձեռեր հարձակումը զարգացնելու Մարգարայի կամրջի ու Իգդիրի ուղղությամբ և հաջողության դեպքում փակելու Սուրմալուի հայ բնակչության ու զորքի նահանջի ուղիները՝ նրանց զրկելով Արաքսը գետացնելու հնարավորությունից:

Ամբողջ օրը հակառակորդի ուժերի դեմ հերոսաբար մարտնչող զորավարները, այլևս անկարող լինելով դիմադրելու դեպի Արաքսի կամուրջները ձգտող թշնամու մեծաքանակ ուժերի գրոհներին, քայլ առ քայլ նահանջում էին: Ռազմաձակատում շատ վտանգավոր կացություն էր ստեղծվել: Եթե հայ մարտիկները չկարողանային կասեցնել թուրքերի և քրդական հրոսակախմբերի առաջխաղացումը, սպա նրանք կարող էին գրավել կամուրջներն ու ներխուժել Արարատյան դաշտի խորքերը:

Ներկայացնելով հայ մարտիկների համար ստեղծված այդ ծանրագույն պահը՝ բաշգառնեցի Մարտիրոսը նշում է. «Երբ տաճիկները անցնում էին մեր ոյժերի թիկունքը, Դրոն կարգադրել էր, որ առաջին գծից ոչ ոք չնահանջի և բոլորը մնան իրենց տեղերում»¹⁹: Թեպետ Դրոյի հրամանատարությամբ մարտնչող զինվորները, որպես օրենք, նրա հրամաններն անառարկելիորեն կատարում էին, սակայն ռազմաձակատում ստեղծված տագնապալի իրավիճակը հրամայաբար թելադրում էր վճռական քայլեր ձեռնարկել և հուսալիորեն պաշտպանել Արաքսի գետանցումները: Սթափ գնահատելով կացությունը՝ Դրոն կապվում է Երևանի հետ և պահանջում, որ գնդապետ Կ. Թարխանյանը, որն այդ ժամանակ գտնվում էր Երևանում, իր հրամանատարության տակ գտնվող ուժերով անհապաղ օգնության շտապեր Սուրմալուի պաշտպաններին: Ստանալով Դրոյի տագնապալի հրամանը՝ Կուռ Թարխանյանն անմիջապես իր հրամանատարության տակ գտնվող «...7 հատ խեղձ ու կրակ ինքնաշարժերով, 6 գնդացիրով սպառազինուած և 180 մարդով դուրս եկաւ Քանաքեռէն ժամը 4-ին...և հասաւ Մարգարա ժամը 6-ին»²⁰:

Հասնելով մարտադաշտ՝ գնդապետ Կուռն երկու բեռնատարներ է ուղարկում Դաշբուռունի պաշտպաններին օգնության, իսկ ինքը շտապում է Իգդիր, ուր այդ պահին գտնվում էր Դրոն: Պարզվում է՝ Մարգարայից Իգդիր ձգվող մայրուղին ամբողջովին բռնված է թշնամու զինվորներով և առաջ գնալու հնարավորություն չկա: Տվյալ իրավիճակում այլընտրանք գոյություն չուներ: Այն, ինչ ձեռնարկեց գնդապետ Կուռն, անտարակույս պահանջում էր, որ զինվորականը օժտված լինի ընդգծված արիությանը ու վճռականությամբ. «...Առանց երկար մտածելու՝ Կուռն դասատրում է զինուորներին ինքնաշարժերի վրայ, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մօտ և չորս ինքնաշարժերը իրարից յիսուն քայլ հեռու, արագութեամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ձանապարհի երկու կողմով: Տարով զինուոր վիրաւոր և գնդացրային մասի պետ հերոս Մալադիկին սպանուած՝ Կուռն ձեղքում է թշնամու շղթան և հասնում օրհասական դիմադրութիւն ցոյց տուող Դալիգդաշին օգնութեան»²¹:

Հարկ է ընդգծել, որ բեռնատարներով թշնամու վրա գնդապետ Կուռոյի ձեռնարկած հարձակումն ու նրանց մարտաշարքերը ձեղքելու հաջողությունը արմատական բեկում են մտցնում այդ օրն ընթացող ձակատամարտում: Գնդապետ Կուռ Թարխանյանի իրականացրած խիզախ և հանդուգն գրոհի իսկությունը վկայում է նաև բաշգառնեցի Մարտիրոս Աբրահամյանը²²:

Գնդապետ Կուռոյի՝ հիրավի հիացմունքի արժանի մարտավարությունը կտրուկ կերպով փոխում է իրավիճակը: Կուռն, իր ուժերին միացնելով Ջհանգիր աղայի եզդի-

19 Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, Իմ յիշելի յուշերը, Թեհրան, 1978, էջ 470:

20 Արծրունի Վ., նշվ. աշխ., էջ 204:

21 Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 478-479:

22 Տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 470:

ների հեծելագործը, ջախջախում է Դալիկ-Դաշը պաշարած հակառակորդի ուժերը, ապա հաղթահարում մինչև Իգդիր դիրքավորված հակառակորդի դիմադրությունը, բացում է Մարգարա-Իգդիր խճուղին և հաղթականորեն ներկայանում հրամանատար Դրոյին:

Խմբապետ Մարտիրոսը, իր հուշերում համառոտ ներկայացնելով Մուրմալուի ճակատում ընթացող կռիվների մի քանի ուշագրավ դրվագներ, գրում է, որ գրոհներից մեկի ժամանակ թուրքերին քրդերի համագործակցությամբ հաջողվել էր թափանցել նույնիսկ Իգդիր: Դատելով նրա ներկայացրած փաստերից, պարզվում է, որ Դրոյին հաջողվել էր Իգդիրը թշնամու ուժերից մաքրել գնդապետ Կուռոյի նշանավոր ձեռքումն իրականացնելուց հետո միայն: «Կուռոյի ուժերի գլուխն անցած,- գրում է Մարտիրոսը,- Դրոն դուրս է գալիս քաղաքից և վերադառնալով՝ յարձակում է նրանց վրայ: Քրդերն ու տաճիկները մեծ թուով դիակներ թողնելով Իգդիրի փողոցներում, դիմում են փախուստի»²³:

Կուռոյին հանձնարարելով Արաքսի գետանցումների պաշտպանությունը՝ Դրոն, համախմբելով ուժերը, վճռական հարձակում է ձեռնարկում բազմաթիվ ապարդյուն գրոհներից արդեն հոգնած ու հուսալքված հակառակորդի վրա: Թուրքական զորամասերն ու քրդական հրոսակախմբերը, կորցնելով զգալի քանակությամբ սպանվածներ ու վիրավորներ, նահանջում են մինչև ելման դիրքերը:

Ընդհանրացնելով հոկտեմբերի 24-ի ճակատամարտի արդյունքները՝ կարելի է ասել, որ գերակշռող ուժերով ձեռնարկած հարձակումները թուրքական հրամանատարությանը որևէ շոշափելի արդյունք ու առավելություն չտվին, և Դրոյի զինվորները հրաշալի քննություն բռնեցին: «Ճակատամարտ» լրագրի թղթակիցը այդ կռիվների վերաբերյալ մայրաքաղաքից խմբագրություն է ուղարկել հետևյալ հաղորդագրությունը. «Թուրքերը յարձակում կը գործեն Իգդիրի վրայ, որ Երևանն էն 45 քիլոմետր հեռու է: Մոտ 4 հազար թրքական կանտնաուր զորք և 10 հազար քիւրտ և թուրք խուժան կը մասնակցեին յարձակումին, իրենց դէմ ունենալով հայկական հերոս բանակը, որուն թիւը կը հասնի 4 հազարի...Թրքական կորուստները շատ մեծ են և կը հասնին հազարի, մինչ մեր զօհերը կըլլան 50 հոգի...Իգդիրի ճակատը կը պաշտպանէ Դրօն»²⁴:

Մակայն հոկտեմբերի 24-ի մարտերը վճռական գործողությունների միայն սկիզբն էին: Արանց արդյունքը բացարձակապես չէր կարող բավարարել շուտափույթ հաղթանակի ակնկալիքներ ունեցող թուրքական հրամանատարությանը:

Հոկտեմբերի 25-ը խաղաղ անցավ, բայց միանգամայն պարզ ու հասկանալի էր, որ այդ խաղաղությունը խաբուսիկ է: Հակառակորդին նախապատրաստվելու համար մի փոքր ժամանակ էր պետք, որպեսզի առավել մեծ ծավալով և ուժգնությամբ վերսկսի հարձակումները: Հայկական կողմը նույնպես պատրաստվում էր նոր գոտեմարտերին:

Հակառակորդի հրամանատարությունը, վերախմբավորելով ու համալրելով մարտական ուժերը, հոկտեմբերի 26-ին դարձյալ դիմում է լայնածավալ հարձակման, այն էլ՝ մի քանի ուղղությամբ: Հոկտեմբերի 26-ի ճակատամարտը, որը զգալիորեն տարբերվում էր նախորդներից, Մուրմալուի ռազմաձակատում մղվող կռիվներից ամենավճռականն էր: Այդ օրը հակառակորդի ձեռնարկած հարձակողական գործողությունների մասնակցել են ճակատում կենտրոնացած բոլոր զորամասերը, բազմաթիվ քրդական հեծելախմբեր, մեծ քանակությամբ հրետանի և գնդացիներ: Թուրքական հրամանատարությունը, մեծաքանակ ուժեր կենտրոնացնելով ռազմաձակատի մի քանի հատվածներում, ծրագրում էր հաջորդաբար գրավել գավառի կենտրոնը՝ Իգդիրը, նրան շրջապատող գյուղերը և պաշարման շղթայի մեջ վերցնել հայկական բանակի հիմնական խմբավորումն ու հրամանատարական կետը, որոնք գտնվում էին Իգդիրում: Ջուզահեռաբար, թուրքական զորքերը ուժգին գրոհներ պիտի ձեռնարկեին Մարգարայի և Կարակալայի կամուրջների ուղղությամբ: Թուրք հրամանատարությունը, տեղյակ լինելով իրենց զորամասերին դիմակայող հայկական

23 Նույն տեղում, էջ 470:

24 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, դեկտեմբերի 2:

մարտական ուժերի սակավությանը, ձգտում էր հզոր հարվածներ հասցնել մի քանի ուղղություններով՝ հույս ունենալով, որ հայկական փոքրաքանակ ուժերը ի գորու չէին լինի նույն հաջողությամբ պաշտպանել բոլոր հենակետերը:

Ծրագրած գործողություններն իրագործելու նպատակով թուրքական կանոնավոր զորագնդերը, քրդական հեծելախմբերի հետ միասին անցնելով Չինգիլի լեռնանցքը, կենտրոնանում են Օրգով և Արիաջ գյուղերի մերձակայքում: Հակառակորդի ուժերի մի մասը՝ Բաշգառնեցի Մարտիրոսի վկայությամբ, «...գիշերով անցան Օրգովից և Մեծ Մասսի փեշերով դուրս եկան Իգդիրի թիկունքը՝ գրաւելով Մալաքուն ու Դալիքդաշը, նպատակ ունենալով կտրել Մարգարայի Կամուրջը»²⁵:

Այդ օրը հակառակորդի կողմից կիրառվել է նաև հետևյալ մարտավարությունը: Իր զորքերի թվական գերակշռությամբ ոգևորված թուրք հրամանատարությունը, հայկական զորքերի պաշտպանությունը արագորեն խորտակելու դիտավորությամբ, հոգեբանական գրոհ է ձեռնարկում հայ զինվորների վրա: Նվազախմբի և թմբուկների զարկերի ուղեկցությամբ թուրքական զորաջոկատները մարտաշարքերով և խրոխտ քայլերով մոտենում են հայ մարտիկների դիրքերին: Սակայն իզուր էր թուրքական հրամանատարության փորձը՝ սարսափազդու տեսարաններով ահաբեկել Սուրմալուի պաշտպաններին: Հոգեբանական գրոհին հաջորդում է թնդանոթային մարտկոցների փոթորկալի կրակը, որի պաշտպանությամբ թուրքական զորամասերը և քրդական հեծելախմբերը նետվում են Սուրմալուի պաշտպանների հենակետերի վրա:

Նախորդ օրվա հաղթական կռիվները թևավորել և ոգեշնչել էին հայ զինվորներին ու հրամանատարներին: Բայց չնայած հայկական զորամասերում տիրող մարտնչելու տրամադրվածությանը, այնուամենայնիվ, շատ ծանր իրավիճակ էր տիրում ռազմաճակատի ամբողջ տարածքում: Թուրք հրամանատարությունը, հաշվի չառնելով կորուստները և անընդհատ նորանոր ուժեր նետելով մարտադաշտ, ձգտում էր ամեն գնով ընկճել հայ զինվորների դիմադրությունը և մոտենալ Արաքսի գետանցումներին: Ուստի մի շարք բնակավայրեր մի քանի անգամ ձեռքից ձեռք անցան: «Այս վերջին կռիվների ընթացքում եղել են վայրկեաններ, - նկատում է Վ. Ահարոնյանը, - երբ չորս կողմից անդադար յարձակումների ենթարկուած մեր զորամասերից ոմանք ընկած են եղել չափազանց ծանր դրութեան մէջ: Կորցրած նահանջի ճամբան, որը գրաւուած է եղել թշնամու կողմից, ճակատից կատաղի յարձակումների ենթարկուած մեր զորամասերից մէկի պետը հեռախոսով դիմում է Դրօյին, խնդրելով հրահանգներ ստեղծուած ծանր կացութեան վերաբերմամբ:

- Ինչպէս էք հրամայում վարուել, - հարցնում է զօրամասի պետը:

- Հրամայում եմ բոլորիդ մեռնել, ոչ մի քայլ յետ, - հրամայում է Դրօն:

- Լուււմ եմ, պ. հրամանատար, - լինում է զօրամասի հրամանատարի պատասխանը»²⁶:

Դրոյի հրամանը անառարկելիորեն պիտի կատարվեր: Նրա հատու պատասխանից կրկնակի անգամ զգաստացած հրամանատարը վարպետորեն կազմակերպում է զորամասի պաշտպանությունը և մարտի մեջ մտցնելով տեղ հասած օգնական ուժերը՝ հուժկու հակահարվածով ջախջախում է թշնամու օղակող զորամասերն ու վերականգնում դրությունը: Կռիվների ողջ ընթացքում ռազմաճակատի հրամանատարը անընդհատ շարժման մեջ էր, և ինչպէս միշտ, զինվորների կողքին՝ ամենաշիկացած կետերում: «Կռուի ընթացքում, - գրում է Վ. Ահարոնյանը, - Դրօն ամէն տեղ է: Չի մնում ոչ մի դիրք, որ նա չայցելի, չի մնում ոչ մի զօրամաս, որի թիկունքում, նա գէթ մի քանի բոպէով չէրևայ: Մէկին խրախուսել, միւսին քաջալերել, երկրորդի սխալն ուղղել կամ նոր հրահանգներ տալ ստեղծուած կացութեան հանդէպ, ահա թէ ինչ է անում նա կռուի ընթացքում: Նրան ենթակայ զօրամասերը միշտ զգում են նրա անմիջական ներկայութիւնը: Մի հանգամանք, որ չի կարող չանդրադառնալ նրա զօրաբանակի

25 Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, նշվ. աշխ., էջ 470:

26 «Յառաջ», Եր., 1920, նոյեմբերի 17:

քարծր ռազմական տրամադրության վրա»²⁷:

Չնայած Սուրմալուի հայ մարտական ուժերի նկատմամբ ունեցած գրեթե քառապատիկ գերակշռությանը՝ հակառակորդի ձեռնարկած գրոհներն անհաջողության են մատնվում ռազմաձևակառուցող բոլոր հատվածներում: Դրանցից մեկի ժամանակ թշնամուն հաջողվում է գրավել Խալ ֆալուն, բայց այդ հաջողությունը խիստ կարճատև էր: Այդ տեղամասում մարտնչող մարտիկները գնդապետ Մամաջայանի գլխավորությամբ անցնում են հակահարձակման և խորտակելով հակառակորդի դիմադրությունը՝ հետ են վերցնում Խալֆալուն: Նույն իրավիճակն էր տիրում նաև պաշտպանության այն հատվածներում, որտեղ հայ մարտիկները գործում էին գնդապետներ Խուդաբաշյանի և Թարվերդյանի գլխավորությամբ:

Թուրք հրամանատարությունը զուգահեռաբար գրոհներ է ձեռնարկում նաև Իգդիբի ուղղությամբ: Կենտրոնացնելով զգալի քանակությամբ մարտական ուժեր՝ թուրքերն ու քրդական հեծելախմբերը հարձակվում են Քեթիկի ու Քյուլիկի պաշտպանական տեղամասերում դիրքավորված հայկական զորամասերի վրա: Հայ մարտիկները, տեղի տալով հակառակորդի ուժեղ ճնշմանը, նահանջում են Իգդիբի ուղղությամբ: Սակայն այդ հաջողությունը նույնպես վաղաժամ էր. «...Պահեստի ոստիկաններու պետ Մարտիրոս, ետևէն հասնելով, ո՛չ միայն արգելեց մերիներուն նահանջը, այլև Չարուխչին մինչև Քիլիկ երեք անգամ տալէ և առնելէ յետոյ պահեց նոր նախկին դիրքերը...»²⁸:

Չնայած այն հանգամանքին, որ մարտերը ծավալվում էին ռազմաձևակառուցող գրեթե բոլոր հատվածներում, այնուամենայնիվ թուրք հրամանատարության հարվածի գլխավոր ուղղությունը եղել ու մնում էին Արաքսի երկու՝ Մարգարա և Կարակալայի կամուրջները: Մարգարայի կամրջի տեղամասի պաշտպանությունը, Դրոյի հանձնարարությամբ, իրականացրել են գնդապետներ Թարվերդյանի և Հալաբյանի զորագնդերը, որոնք հրաշալիորեն կատարել են հրամանատարի առաջադրանքը²⁹:

Եթե Մարգարայի կամրջի ուղղությամբ թուրքերի ձեռնարկած բոլոր գրոհները, հայ մարտիկների անկործան պաշտպանության հետևանքով, ապարդյուն են անցնում, ապա Կարակալայի հատվածում մարտերը բոլորովին այլ ուղղվածություն են ընդունում: Այդ ուղղությամբ առաջացող թուրքական զորքն ու քրդական հեծելախմբերը հաջողությամբ զարգացնում են հարձակումը, հասնում են մինչև կամուրջը և գրոհելով պաշտպանության այդ հատվածում դիրքավորված հայ մարտիկների վրա՝ գրավում են կամուրջն ու գետանցում Արաքսը: Ռազմաձևակառուցում ստեղծվում է չափազանց վտանգավոր և տագնապալի դրություն: Եթե անհապաղ հետ չվերցվեր կամուրջը, ապա այդ իրավիճակը անխուսափելիորեն խուճապ կառաջացներ զորքերի շարքերում: Իսկ դա նշանակում էր, որ հայկական զորքերի ու բնակչության վրա անխուսափելիորեն ծառանալու էր շրջափակման ու ոչնչացման սպառնալիքը: Այդ բախտորոշ և, թվում է, անելանելի իրավիճակում իր խիզախ ու վճռական քայլն է կատարում ռազմաձևակառուցող կատարվող գործողություններին ուշի-ուշով հետևող Դրոն:

Ներկայացնելով Սուրմալուի ձևակառուցումն ստեղծված այդ ձգնաժամային պահը՝ Վ. Արծրունին նշում է. «Գարագալա կամուրջին գրաւումն աւելի կարևոր էր և, թէ չվերագրաւուէր՝ անկարելի պիտի ըլլար Արաքսի աջ ափը մնալ: Դրօն հասաւ կայծակի արագութեամբ, միաժամանակ հրամայելով Կոռոյին ու Մարտիրոսին աճապարել իր մօտ՝ Գէչարլու գիւղը»³⁰: Հասնելով մարտադաշտ՝ Դրոն անմիջապես Գէչարլու գյուղում գումարում է գինվորական խորհրդակցություն, ուր ստեղծված կացությունը փոքր-ինչ քննարկելուց ու գնահատելուց հետո որոշվում է անհապաղ դիմել հարձակման և վերագրավել կորցրած դիրքերը: Հայ մարտիկները փայլուն կերպով են կատարում հրամանատարի հանձնարարությունը: Սրընթաց հարձակումով ջախջախե-

27 Նույն տեղում:

28 Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 206:

29 Տե՛ս Խուճապեղ Մարտիրոս Արքահամեան, նշվ. աշխ., էջ 470:

30 Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 206-207:

լով Կարակալայի հատվածում հաստատված թուրք-քրդական զորախմբերին՝ հայկական մարտական ուժերն ամբողջովին վերագրավում են կորցրած տարածքներն ու ամենակարևորը՝ Կարակալայի կամուրջը: Թուրք հրամանատարությունը, չհամակերպվելով կորցրածով, կենտրոնացնում է լրացուցիչ զինական ուժեր և լույսը բացվելուն պես դիմում հարձակման: «Առաջոտ կանուխ,-շարունակում է Վ. Արծրունին,- տեղի ունեցավ 5 ժամ տևող կատաղի կռիւ մը՝ վերջիվերջոյ յաղթանակը մնալով հայկական գօրքին: Դիրքերու և, յատկապէս, կամուրջի քարուքանդումին շնորհիւ, նոր դիրքերը շատ անապահով էին: Այդ պատճառով գնդապետ Կուռօ թշնամին երեք վերստ ետ քշելէ յետոյ կամուրջի մօտերը գետն ականներով և շարժական ցանցերով ծածկեց ու երկու ավերուն վրայ հաստատեց զօրաւոր պահակախումբ»³¹:

Ճակատամարտի մեկ այլ հատվածում թուրքերը գրավում են Իգդիրից ընդամենը 3-4 կմ հեռավորության վրա գտնվող Սուլթանաբադ գյուղը: Սուլթանաբադ և Ալիդամար գյուղերի ուղղությամբ մարտնչող 10-րդ գունդը համառ պաշտպանությամբ կասեցնում է թուրքական զորամասի ու քրդական հեծելախմբերի առաջխաղացումը: Նույն ժամանակահատվածում առավել ուժեղ և համառ կռիվներ են տեղի ունեցել գնդապետ Թարվերդյանի ճակատամասում, ուր հայ մարտիկները դարձյալ մեծագույն ջանքերի գործադրմամբ կարողացել են դիմագրավել թշնամու գրոհները³²:

Ռազմաձակատի ամբողջ տարածքում հայկական զորախմբերն անպատմելի խիզախումներով կասեցնում են թշնամու՝ միմյանց հաջորդող հարձակումները: Թուրքական զորաբանակի հարձակողական ուժն ու հզորությունն ի չիք են դառնում՝ բախվելով հայ մարտիկների անխորտակ պաշտպանությանը: Սակայն սոսկ պաշտպանությունն ու հակառակորդի գրոհներին դիմակայելը Դրոյի նախընտրելի մարտավարությունը չէր: Ռազմաձակատում ստեղծված կացությունը թելադրում էր գործել առավելագույնս արագ ու վճռական, մանավանդ որ Սուլթանաբադի հակառակ ուղղությամբ թուրքերին, այնուամենայնիվ, հաջողվել էր գրավել Ալիդամար գյուղն ու ներխուժել Իգդիրի գերեզմանոցը: Իսկ քրդական հեծելախմբերն արագ տեղաշարժերով կարողացել էին անցնել ռազմաձակատի թիկունքն ու հարձակվել Դալիկ-Դաշի վրա: Պաշտպանության այդ հենակետը պաշտպանող եզրի կամավորների զորախումբը, անկարող լինելով դիմակայել քրդական հեծելախմբերի հարձակումներին, թողնում է դիրքերն ու նահանջում: Տեղեկանալով ռազմաձակատի թիկունքում քրդական հեծելախմբերի հայտնվելու և նրանց վտանգավոր տեղաշարժերի մասին՝ Դրոն իգդիրցիների զորախմբով, որը կռիվների ողջ ընթացքում մշտապես գործել է նրա անմիջական հրամանատարությամբ, գնդապետ Կուռոյի զինակցությամբ անհապաղ ուղևորվում է դեպի Դալիկ-Դաշի վտանգված հատվածը: «Անմիջապես,- գրում է Մարտիրոսը,-վրայ է հասնում Դրոն՝ Կուռոյի ուժերով, յետ դարձում Եգդի կամավորներին... իրենց ղեկավար Ջհանգիր Բէկի հետ և նրանց հետ գրոհում են քրդերի վրայ ու մի լաւ ջարդ տալով, փախցնում են նրանց»³³:

Ռազմաձակատի՝ հարձակման ենթարկված բոլոր հենակետերում թշնամու գրոհները չեզոքացնելուց և թիկունքն անցած քրդական հեծելախմբերի սպառնալիքը վնասազերծելուց հետո հասունանում է պաշտպանությունից հարձակման անցնելու պահը: Քանի որ հակառակորդի ուժերը մի քանի անգամ հարձակվել էին գնդապետ Մամաջանյանի և նրա հարևանությամբ մարտնչող Մարտիրոսի զորամասերի պաշտպանական դիրքերի վրա և յուրաքանչյուր անգամ պարտվելով ու մեծ զոհեր տալով նահանջել, Դրոն, հավատարիմ մնալով իր դավանած առաջին իսկ հնարարավորության դեպքում հարձակողական գործողություններ ձեռնարկելու մարտավարությամբ, որոշում է զարգացնել ձեռք բերած հաջողությունն ու հարձակումը սկսել հենց այդ տեղամասից: Նրա հրամանով գնդապետ Մամաջանյանը, իր հրամանատարությամբ գործող գնդի 1-ին գումարտակի գլուխն անցած, անակնկալ ու սրըն-

31 Նույն տեղում:

32 Տե՛ս **Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 471:

33 **Պետրոսյան Թադէ**, Դրօ, «Հայրենիք», 1956, N 10, հոկտեմբեր, էջ 23:

թաց գրոհով դուրս է շարտում հակառակորդի ուժերը Սուլթանաբադի մոտակայքից և արագությամբ զարգացնելով հարձակումը՝ գրավում է Ալիդամար ու Յաղջի գյուղերը: Ճակատամարտում ընդհանուր հարձակում ձեռնարկելու առաջին կայծը բռնկված էր, անհրաժեշտ էր այն արագորեն զարգացնել:

Դրոն, կենտրոնացնելով մի քանի զորախմբեր, վճռական հարձակում է գործում ապարդյուն գրոհներից թուլացած ու հուսալքված թուրքական զորքի ու նրան աջակցող քրդական հրոսակախմբերի վրա: Անկասելի ու անձնուրաց գրոհներով խորտակելով հակառակորդի դիմադրությունը՝ հայ մարտիկները ջախջախում են թշնամու մարտաշարքերը, և «... թշնամին անհամար դիակներ թողնելով՝ դիմեց փախուստի, մինչև Բարթոդյան լեռների միւս կողմը»³⁴:

Հաղթությունը կատարյալ էր, ճակատամարտի հաղթական ավարտին մեծ հավատով և սրտատրոփ սպասող մայրաքաղաքի ու Արարատյան դաշտի բնակչությունը ցնծության մեջ էր: Սուրմալուի ուղղությունից մայրաքաղաքի վրա ծառացած մահասարսուռ սպառնալիքը խորտակվեց՝ բախվելով հայ զինվորների ու զորահրամանատարների անկողորում կամքին ու խիզախությանը:

Միանգամայն իրավացի էր Կարո Սասունին՝ նշելով. «Երևանյան բանակը յաղթական էր: Այն ոչ միայն մայրաքաղաքն իր շրջանների վտանգէ ազատած էր, այլ իր փայլուն հաջողություններով այդ ձակատի վրայ յաղթական էր»³⁵: Ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը հավաստող ևս մի վկայություն. «Տաճիկների յամառ յարձակումները, - նշվում է Հայաստանի Հանրապետության վերջին անցքերի լուսաբանմանը նվիրված վավերագրերից մեկում, - չորս օր շարունակ անյաջողություն էին ունեցել Իգդիրի ձակատում, ուր Դրոյի հրամանատարությամբ մեր զօրամասերը ցույց էին տուել հերոսական դիմացկունություն և յամառություն»³⁶:

Դժվար է գերազնահատել Սուրմալուի ձակատամարտի պատմական նշանակությունը, մեր ժողովրդի գոյատևման գործում նրա ունեցած դերակատարությունն ու իրական արժեքը: Նրանում Դրոն ևս մեկ անգամ ապացուցեց, որ իզուր չէ վաստակել անպարտելի զորավարի անունը:

Ինչպիսի ձակատագիր էր սպասում ողջ Արարատյան դաշտի և մայրաքաղաք Երևանի հայությանը, եթե թուրքական զորքերին ու քուրդ հրոսակախմբերին հաջողվեր հաղթահարել Սուրմալուի ձակատը պաշտպանող հայ մարտիկների դիմադրությունը և գետնացնելով Արաքսը՝ ներխուժել Արարատյան դաշտի խորքերը և հասնել Երևան: Խոսքերն այստեղ ավելորդ են. որևէ կասկած չի կարող լինել, որ նրանք անխնա կոտորածի կենթարկեին Երևանի ու նրա մերձակա շրջանների հայությանն ու իսպառ կամայացնեին իրենց բռնազավթած տարածքները:

Այս առումով երիցս իրավացի է Վահե Արծրունին, ով իր հեղինակած «Հայ-Տաճկական պատերազմը» արժեքավոր գրքում նկարագրելով Սուրմալուի ռազմաձակատում Դրոյի հրամանատարությամբ մարտնչող զորամասերի մղած կռիվների մանրամասները և Կարսի ձակատում ու ողջ պատերազմում հայկական զորքի կրած պարտության պատճառները՝ հանգում է հետևյալ ուշագրավ եզրակացությանը. «Հայկական զօրքի պարտության պատճառները շատ էին և պարզ, եթե մենք քաջություն ունենանք տեսնելու և, մանաւանդ՝ խոստովանելու զանոնք: Այս տողերը փակելէ առաջ անհրաժեշտ կը համարին ըսիլ, թէ այս բոլորը չեն տարածիր Սուրմալուի հրամանատար Դրոյի վրայ, որովհետև ան, իրօք, իր անձնական հմայքով և մասնակցութեամբ՝ փրկեց նոյնքան վտանգաւոր ձակատ մը և, հաւանաբար, նաև այն, ինչ որ այժմ ունինք՝ փոքրիկ Հայաստանը»³⁷:

Չսայած Սուրմալուի ռազմաձակատում ձեռք բերված փայլուն հաղթանակին՝ ընդամենը մի քանի օր անց Կարսի ռազմաձակատը, ի տարբերություն Սուրմալուի,

34 Նույն տեղում:

35 Տե՛ս ՀՅԴ Կենտրոնական արխիվ, թղթծ. 121, գ. 97, «Հայաստանի վերջին անցքերը», էջ 2-3:

36 Տե՛ս **Արծրունի Վ.**, նշվ. աշխ., էջ 37:

37 Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 37:

ունենալով պաշտպանության հզոր միջոցներ, հարյուրավոր հրանոթներ ու գնդա-
ցիլներ և անգամ զրահագնացք ու մի քանի ինքնաթիռ, անկարող եղավ կասեցնելու
թուրքական զորքերի հարձակումը և առանց որևէ դիմադրության հակառակորդին
հանձնեց հզոր բերդաքաղաքը: Չանցած մի քանի օր՝ նույն բախտին արժանացավ
նաև Ալեքսանդրապոլը:

Կարսի անփառունակ անկումը կատարյալ անակնկալ էր Սուրմալուի ուղղությամբ
մարտնչող զինվորների համար: Կարսի ռազմաճակատում հայկական զորքերի պար-
տության և Ալեքսանդրապոլի կորստից հետո ստեղծված չափազանց աննպաստ մար-
տական դրության թելադրանքով Սուրմալուի ռազմաճակատի հաղթական զորքերը
հարկադրված թողնում են պաշտպանության իրենց բնագծերը և ապահովելով գա-
վառի հայ բնակչության անվտանգ տեղափոխությունը՝ գետանցում են Արաքսն ու
այրում նրա կամուրջները: Սուրմալուի ճակատամարտի հաղթական զորամասերը
այժմ ոչ միայն պիտի պաշտպանեին Արաքսի գետանցումները, այլև դիրքեր գրավելով
մինչև Արաքս կայարանը՝ փակեին դեպի մայրաքաղաք տանող ուղիները:

Անդրադառնալով Սուրմալուի ճակատը պարպելու իրողությանը՝ Մարտիրոսը
գրում է. «Տաճիկների բոլոր փորձերը գրաւելու Սուրմալուն և առաջանալու Երևան՝
անցան ապարդիւն, մինչև որ Կարսի ճակատի զօրամասը տեղի տուաւ տաճիկների
ուժերին: Այս ամօթալի դէպքից յետոյ Սուրմալուի զօրամասը ստիպուած եղաւ թողնել
իր դիրքերը, այրել Մարգարայի և Կարակալայի կամուրջները և ճակատ ընդունել
Արաքսի երկայնութեամբ մինչև Կարակալայի կամուրջը, այդտեղից էլ մինչև Ալազետազ
կայարանը»³⁸:

Կարսի, ապա նաև Ալեքսանդրապոլի անկման պատճառով Դրոյի զորագնդերի
կողմից Սուրմալուի տարածքը հարկադրաբար պարպելու իրողությունը արձա-
նագրում է նաև Կարո Սասունին: «Մինչ այդ թուականը, Դրոյին յանձնուած ճակատը
կը մնար ամուր և թուրքերի փորձած վերջին յարձակողականներն այ կը ձախողէին
առաջիններու պէս: Բայց Ալեքսանդրապոլի անկումը կը ստեղծէր նոր զինուորա-
կան կացութիւն մը, որու պատճառով Իգդիրի և շրջանի հայ ազգաբնակչութիւնը իր
բոլոր ունեցումածքով և կանոնաւոր նահանջով մը կը փոխադրուէր Մարգարա կա-
մուրջէն Էջմիածին և Երևանի շրջանները: Հայ զօրքերը կու գային ամբանալու
Մարգարա գիւղի մէջ, այրելով համանուն կամուրջը»³⁹: Թողնելով Իգդիրը՝ Դրոն
նույնպէս տեղափոխվում է Արաքսի մյուս ափը և իր հրամանատարական կետը
հաստատում Մարգարա գյուղում: Նրան այլևս երբեք բախտ չէր վիճակվելու լինել
հայրենի Իգդիրում: Սուրմալուի ճակատամարտի հաղթական զորամասերն այժմ
արդեն դիրքեր էին գրավել Արաքսի հակադիր ափին, Կարակալայի կամրջից մինչև
Աղին և Արաքս կայարաններն ընկած տարաքում:

1920 թ. նոյեմբերի 10-ին և 12-ին թուրքերը Կարակալայի կամրջի ու միաժամանակ՝
Արաքս կայարանի Զաջուռ-Քյափանակ ուղղություններով հարձակում են գործում
Դրոյի գլխավորած հայ մարտիկների դիրքերի վրա: Սուրմալուի ճակատի մարտիկները
արդեն հասցրել էին, ինչպես հարկն է, ամրացնել իրենց զբաղեցրած հենակետերը:
Նրանց համար սարսափելի չէր թշնամու ձեռնարկած որևէ հարձակում:

Ինչպես և նախորդ մարտերում, այս անգամ ևս նրա առաջնորդած զորամասի
գնդապետ Կուռտ Թալիսանյանի ու Մարտիրոս Աբրահամյանի գլխավորած զորա-
ջոկատները հուժկու հակահարվածներով ջախջախում են թուրքական զորավաճառների
գրոհները ու խափանում դեպի Երևան շարժվելու փորձերը: «Մեր զինուորները, –
պատմում է Մարտիրոսը, – սաստիկ վրդովուած էին ու իրենց մէջ խօսում էին ու ասում.
– Սպասէք և կը տեսնէք, թէ ինչպիսի դաս կը տանք ձեզ: Մի կարծէք, թէ Կարսի
զինուորները ձեզ երես տուեցին, դուք էլ անպատկառօրէն պատրաստ էք զգում ձեզ
առաջանալու: Մենք ցոյց կը տանք ձեզ, թէ ինչպէս հայ զինուորը գիտի պաշտպանել

38 Տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Յիշատակելի օրեր, «Հայրենիք», 1934, N 5, մարտ, էջ 125:

39 Սասունի Կարօ, Հայ-թրքական պատերազմը, «Հայրենիք», 1926, N 9, յուլիս, էջ 111:

իր հայրենիքի, գէնքի ու հրամանատարի պատիրը»⁴⁰:

Նոյեմբերի 12-ին կրկին անգամ փորձելով թափանցել Արարատյան դաշտ՝ թուրքերը հարձակում են գործում Կարակալա կամրջի ուղղությամբ: Գետանցումների պաշտպանները, «...թոյլ չտալով, որ հակառակորդները գետը մտնեն անախ ու անկասկած: Դեռ գետը չկտրած՝ Կուռոյի 4 գնդացիորդներն ահեղ տեղատարափ մը լեցուցին անոնց վրայ, որոնք, կարճ դիմադրութենէ մը յետոյ, փախան՝ Արաքսի ալիքներուն յանձնելով 3-400 զոհեր՝ առանց որևէ փոխարինութեամբ»⁴¹:

Թուրքերի ձեռնարկած բոլոր փորձերը՝ գետանցելու Արաքսն ու ներխուժելու Արարատյան դաշտի խորքերը, դարձյալ անցնում են ապարդյուն, Դրոյի գլխավորած զորքերի դիմադրությունը ավելի քան անսասան էր:

Ցավալի և անբացատրելի իրողություն. հայ զինվորը ընդունակ է սխրանքներ, երբեմն անգամ հրաշքներ գործել և հաղթանակով ու արժանապատվությամբ դուրս գալ ամենածանր, անելանելի թվացող իրավիճակներից, իսկ երբեմն էլ, առանց մարտնչելու, պարտվել և թշնամու տնօրինությանը հանձնել հսկայական տարածքներ, պաշտպանական ամրակուռ շրջաններ, անմատչելի բերդեր:

Ընդհանրացնելով՝ հարկ է նշել, որ 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Դրոյի գլխավորած Սուրմալուի ճակատամարտը հայկական զորքերի նվաճած միակ ծանրակշիռ հաղթանակն էր, որն, անկասկած, փրկարար նշանակություն ունեցավ Հայաստանի և հայության համար:

Համլետ Մ. Գևորգյան – հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությանը և անվանի ֆիդայիների գործունեությանը նվիրված ավելի քան 10 մենագրության հեղինակ:

Արթուր Ս. Ղազարյան – Հայկական հարցի վերաբերյալ պատմագիտական ու քաղաքագիտական հոդվածների հեղինակ:

Summary

BATTLE OF SURMALU

On the occasion of the 60th anniversary of death of Commander Drastamat Kanayan

Hamlet M. Gevorgyan
Arthur S. Ghazaryan

Keywords – Drastamat Kanayan, battle of Surmalu, Republic of Armenia, front of Kars, Ararat valley, Karo of Sasun, Kurd, Koghb, Kazim Karabekir Pasha, Caracalla, Yerevan, Vahe Artsruni, A. Aharonyan, Igdir, Kuro Tarkhanyan, Martiros Abrahamyan.

The battle of Surmalu led by Drastamat Kanayan was the last battle of the Armenian-Turkish war of 1920, when the Armenian army won a decisive victory. But this fact did not receive due attention among Armenian historiography and

40 Տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամեան, Յիշատակելի օրեր, «Հայրենիք», 1934, N 5, մարտ, էջ 125:

41 Վահե Արծրունի, նշվ. աշխ., էջ 294:

society. Although the Government of Armenia and the army's high command believed that the main front was the one of Kars, but Surmalu was not at all inferior to Kars due to its geographical position and tactical importance. The front of Surmalu was closer to Yerevan and to the most densely populated region – the Ararat valley, besides, compared to Kars front there were no sufficient troops and weapons. The victory of the Armenian armed forces in the battle of Surmalu saved Armenians of Ararat valley from being slaughtered.

Thus, the victory of the Armenian troops in the battle of Surmalu during the Turkish–Armenian War of 1920 was crucial to the future survival of Armenia, and Dro has once again proved that he deserved the name of the invincible commander.

Резюме

СУРМАЛИНСКАЯ БИТВА

По случаю 60-ой годовщины со дня смерти полководца
Драстамата Канаяна

Гамлет М. Геворкян
Артур С. Казарян

Ключевые слова – Драстамат Канаян, Сурмалинская битва, Республика Армении, Карсский фронт, Араратская долина, Каро Сасуни, курд, Кохб, Кязим Карабекир паша, Каракала, Ереван, Ваге Арцруни, А. Агаронян, Игдир, Куро Тарханян, Мартирос Абрамян.

Сурмалинская битва была последним в биографии Драстамата Канаяна и в то же время – единственным крупным сражением турецко–армянской войны 1920-го года, в котором армянская армия одержала убедительную победу. Но этот факт не получил должного внимания в армянской историографии. Хотя правительство РА и командование армией считали, что главным направлением войны является Карсский фронт, но Сурмалу своей географической позицией и стратегическим значением не уступала Карсу. Сурмалинский фронт находился ближе к Еревану и густонаселенной Араратской долине, и по сравнению с Карсским фронтом, там не имелось достаточных войск и вооружений. Победа армянских вооруженных сил спасла армян Араратской долины от физического уничтожения.

Победа армянских войск в Сурмалинском бою имела решающее значение в деле выживания Армении, а Дро еще раз доказал, что не зря носит имя непобедимого военачальника.